



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 21(361) «21» դեկտեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
352	««Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-70-Ն օրենքը	
353	««Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-71-Ն օրենքը	
354	««Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-72-Ն օրենքը	
355	«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-73-Ն օրենքը	
356	««Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-74-Ն օրենքը	
357	««Ոստիկանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-75-Ն օրենքը	
358	««Ոստիկանությունում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-76-Ն օրենքը	
359	««Ձենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-77-Ն օրենքը	
360	««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում	

	փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-78-Ն օրենքը	
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
361	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 79-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 983-Ն որոշումը	
362	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1000-Ն որոշումը	
363	«Զմեռային զորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 1002-Ն որոշումը	
364	«Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների հաշվառման և նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրման կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի հ. 344 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 1004-Ն որոշումը	
365	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1018-Ն որոշումը	
366	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1031-Ն որոշումը	
367	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 16-ի N 620 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1042-Ն որոշումը	
368	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 264-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1046-Ն որոշումը	
369	«Արցախի Հանրապետության 2018-2019 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագի-	

	<p>տական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցի հաստատման, պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանման ու հիմնադրման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ԱՀ կառավարության N 1047-Ն որոշումը</p>	
--	--	--

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
նոյեմբերի 29-ին

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-210 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Սույն օրենքի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

ա) **արեգակնային էներգիայի աղբյուր՝** արեգակից փոխանցված ճառագայթներ.

բ) **երկրաջերմային էներգիայի աղբյուր՝** ստորերկրյա տաք ջրեր (հիդրոթերմալ աղբյուր) կամ ապարների ջերմություն (երկրաթերմալ աղբյուր).

գ) **էներգաարդյունավետության ցուցանիշ՝** էներգատեղակայանքների համար ազգային ստանդարտներով ամրագրված էներգակիրների օգտագործման կամ կորստի բացարձակ, տեսակարար կամ հարաբերական մեծությունը ցանկացած տեսակի արտադրանքի արտադրությունում (ծառայության մատուցման ընթացքում) կամ տեխնոլոգիական պրոցեսում.

դ) **էներգախնայողություն՝** իրավական, կազմակերպչական, գիտական, արտադրական, տեխնիկական և տնտեսական նպատակային գործունեություն՝ ուղղված էներգետիկ ռեսուրսների տեսակարար ծախսի նվազեցմանը.

ե) **էներգակիր՝** զանազան ագրեգատային վիճակներում գտնվող նյութ (պինդ, հեղուկ, գազային) կամ մատերիայի այլ ձևեր (պլազմա, դաշտ, ճառագայթում և այլն), որոնցում կուտակված էներգիան կարող է օգտագործվել էներգամատակարարման նպատակով.

զ) **էներգակիրների արդյունավետ օգտագործում՝** տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման ժամանակակից մակարդակով և շրջակա միջավայրի պահպանման պահանջներով պայմանավորված էներգակիրների օգտագործումը տնտեսապես շահավետ և առավելագույն արդյունավետություն ստանալու պայմանով.

է) **էներգատեղակայանք՝** էներգիայի արտադրության, կերպափոխման, հաղորդման, կուտակման, բաշխման և սպառման համար նախատեսված սարքավորումներ կամ փոխկապակցված սարքավորումների և կառույցների համալիր.

ը) **էներգետիկ հաշվեկշիռ՝** սահմանված ժամանակահատվածում արդյունահանված, արտադրված, ներմուծված, վերամշակված, փոխակերպված,

փոխադրված, բաշխված և պահեստավորված, արտահանված ու օգտագործված էներգակիրների քանակական բազային բնութագիր.

թ) **էներգետիկ փորձաքննություն**՝ խորհրդատվական ծառայություն՝ ուղղված իրավաբանական և ֆիզիկական անձանց էներգետիկական տնտեսությունների էներգետիկ հաշվեկշիռների և (կամ) էներգատեղակայանքներում էներգակիրների արդյունավետ օգտագործման էներգաարդյունավետության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն ներառող փաստաթղթերում (այսուհետ՝ էներգետիկ հաշվետվություններ) առկա տեղեկատվության ստուգմանը (այդ թվում՝ էներգաարդյունավետության ցուցանիշների չափազրմամբ), որի արդյունքում տրամադրվում է էներգետիկ փորձաքննական եզրակացություն.

ժ) **ինքնավար էներգաարտադրող**՝ սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական և (կամ) ջերմային էներգիա, կենսազագ արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ժա) **կենսազանգվածի էներգիայի աղբյուր**՝ մարդու կենսաբանական կամ տնտեսական գործունեության և այլ կենդանական ծագում ունեցող օրգանական և (կամ) այրվող արգասիքներ, բուսական մնացորդներ և թափոններ, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսեր.

ժբ) **հողմային էներգիայի աղբյուր**՝ քամի.

ժգ) **ջրային էներգիայի աղբյուր**՝ մակերևութային և ստորերկրյա ջրեր.

ժդ) **վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ**՝ հողմային, արեգակնային, ջրային, երկրաջերմային և կենսազանգվածի վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էներգակիրների համախումբ, որոնք կարող են օգտագործվել սպառման նպատակով.

ժե) **վերականգնվող էներգետիկա**՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների և մեխանիկական էներգիայի ստացման ոլորտ:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում՝

- 1) «ա» կետում «փոխադրող» բառից հետո լրացնել «բաշխող» բառը.
- 2) «ե» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել «եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները պետք է պահպանեն նախագծողները, կառուցապատողները և շահագործման ընդունողները: Էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետում «պետական ծրագրերում» բառերից հետո լրացնել «, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի

տոկոսս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում» բառերը.

2) «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե» էներգախնայողության և էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության ստանդարտացման փաստաթղթերի մշակումը և հաստատումը.».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անտառտնտեսության տարածքներում, պետական արգելավայրերում և ազգային պարկերում դրանց պահպանության ռեժիմներին համապատասխանող և կառուցվող շենքերի ու կառուցվածքների նախագծերում կիրառվող տեխնոլոգիաների և տեխնիկական լուծումների էներգաարդյունավետության ցուցանիշները, ինչպես նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառման պահանջները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) վերնագրում և 1-ին մասում «պետական» բառը փոխարինել «ազգային» բառով.

2) «բ» կետում «փոխադրման» բառից հետո լրացնել «բաշխման» բառը.

3) «ե» կետում «էներգաարդյունավետության» բառից հետո լրացնել «և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության» բառերը:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8. էներգասպառող սարքերի և սարքվածքների շրջանառությունը

1. էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

2. Արցախի Հանրապետության կառավարությունը սահմանում է մարդու կյանքին և (կամ) շրջակա միջավայրին վտանգ սպառնացող (վտանգավոր նյութեր պարունակող) էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի ցանկը, այդ ցանկում ընդգրկված էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի Արցախի Հանրապետությունում շուկայահանման պայմանները՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն, ինչպես նաև դրանց շահագործումից հետո օգտահանման կարգը, որոնք պետք է պահպանի յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ:»:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. էներգակիրների պետական հաշվառումը և վիճակագրությունը

1. Արցախի Հանրապետության կառավարությունը սահմանում է տնտեսության ճյուղերն ըստ էներգատարության՝ բարձր, միջին և ցածր:

2. Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը վարում է արդյունահանվող, արտադրվող, ներմուծվող, վերամշակվող, փոխակերպվող, փոխադրվող, բաշխվող և պահեստավորվող, արտահանվող և օգտագործվող էներգակիրների հաշվառում՝ «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, որի արդյունքների հիման վրա էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը կազմում է էներգետիկ հաշվեկշիռ: Էներգետիկ հաշվեկշիռը հրապարակում է պետական վիճակագրություն իրականացնող մարմինը:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 12. Էներգետիկ փորձաքննության մասին նորմատիվ իրավական ակտերը

Էներգետիկ փորձաքննության մասին նորմատիվ իրավական ակտերը կազմված են սույն օրենքից, դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերից, ինչպես նաև հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը մշակող Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերից:»:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Էներգատեղակայանքների, շենքերի և կառուցվածքների էներգետիկ փորձաքննությունը կամավոր է և իրականացվում է դրանց սեփականատերերի նախաձեռնությամբ ու հաշվին:

«Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն ապրանքների ու ծառայությունների գնումների իրականացման նպատակով կազմվող գնման պայմանագրերում անհրաժեշտության դեպքում նշվում է ապրանքների ու ծառայությունների էներգետիկ փորձաքննության եզրակացության ներկայացման պահանջ մատակարար կազմակերպություններից:

3. Էներգետիկ փորձաքննությունն իրականացվում է Արցախի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ «Հավատարմագրման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հավատարմագրված համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման մարմինների կողմից:»:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «համապատասխանության հավաստման լիազոր մարմնի» բառերը փոխարինել «հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը մշակող Արցախի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի» բառերով, իսկ «կառավարությունը» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության կառավարությունը» բառերով:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «ա» կետն ուժը կորցրած ճանաչել.
- 2) «բ» կետում «կառավարությունը» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության կառավարությունը» բառերով:

Հոդված 12. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ հավելվածով.

«Հավելված

Ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի էլեկտրասպառման համակարգի անխափան աշխատանքի և գործունեության իրականացման անհրաժեշտ պայմաններն ապահովելու նպատակով էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ապահովում է էլեկտրական էներգիայի փոխհոսքերը:

1. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարների հաշվարկը կատարվում է ամսական, իսկ վերջնահաշվարկը՝ տարեկան կտրվածքով:

2. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակներում տարվա ընթացքում մատակարարած (հանձնած) էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում չի տրամադրվում այն ծավալի չափով, որը հավասար է տվյալ տարվա ընթացքում մյուս կողմից ստացված (հանձնված) էլեկտրական էներգիայի ծավալին (այսուհետ՝ հատուցման ոչ ենթակա ծավալ):

Տարվա արդյունքներով վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի կողմից հատուցման ոչ ենթակա էլեկտրաէներգիայի ծավալից ավելի առաքված էլեկտրաէներգիա ձեռք բերելը բաշխման լիցենզիա ունեցող անձը կատարում է՝

1) տվյալ սպառողական խմբի համար յուրաքանչյուր ամսվա համար Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված սակագների 50 տոկոսի չափով, բացառությամբ սույն պարբերության 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի.

2) փոքր հիդրոէլեկտրակայանների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից տվյալ խմբի (բնական ջրահոս, ոռոգման համակարգ, խմելու ջրատար) համար սահմանված գործող սակագնին հավասար.

3) արեգակնային և հողմային էներգիայի աղբյուրների կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայանների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական

մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից արեգակնային էներգիայի աղբյուրի կիրառմամբ արդյունաբերական մասշտաբի էլեկտրակայանների համար սահմանված գործող սակագներից ամենացածր սակագին հավասար՝ սույն մասի 1-ին կետով նախատեսված 50 տոկոսի չափից ցածր լինելու դեպքում:

Բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից հատուցման ոչ ենթակա էլեկտրաէներգիայի ծավալից ավելի առաքված էլեկտրաէներգիա ձեռք բերելը վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգա-արտադրողը կատարում է ամսական հաշվարկի արդյունքով մատակարարված էլեկտրական էներգիայի ծավալի և հատուցման ոչ ենթակա ծավալի դրական տարբերության հիման վրա, որի դիմաց ինքնավար արտադրողը վճարում է էլեկտրաէներգետիկական համակարգում տվյալ տարվա ընթացքում յուրաքանչյուր ամսվա համար տվյալ սպառողական խմբի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի սահմանած սակագներով:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգա-արտադրողի և էլեկտրական էներգիայի Բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում տրամադրելու կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը:»:

Հոդված 13. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Արցախի Հանրապետության կառավարությունն Օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված էներգետիկ փորձաքննության կարգը համապատասխանեցնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՀՕ-70-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
նոյեմբերի 29-ին

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 30-ի ՀՕ-6 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածից հանել «իրավաբանական» բառը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արցախի Հանրապետության Էներգետիկայի բնագավառը հանրային ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման ու մատակարարման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբն է:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

ա) **անվտանգության գոտիներ**՝ էներգետիկայի բնագավառի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման գծերի և այլն) շրջակա տարածքները, որոնք նախատեսվում են օբյեկտների բնականոն գործունեության, շահագործող անձնակազմի և քաղաքացիների կյանքի անվտանգության, այլ օբյեկտների նկատմամբ փոխադարձ անվտանգության ապահովման նպատակով.

բ) **բաշխման ցանց**՝ էլեկտրական կամ ջերմային էներգիայի կամ բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից համապատասխանաբար կառավարվող և շահագործվող էլեկտրական կամ ջերմային էներգիայի կամ բնական գազի բաշխման գծերի, ենթակայանների, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների միասնական համակարգը, որի

միջոցով էլեկտրական կամ ջերմային էներգիան կամ բնական գազը բաշխվում է սպառողներին.

գ) **գաղտնապահական տեղեկատվություն**՝ լիցենզավորված անձի ֆինանսական վիճակի և առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվությունը կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել լիցենզավորված անձին, ինչպես նաև սպառողներին վերաբերող լիցենզավորված անձի մոտ առկա տեղեկությունները.

դ) **էնթասպառող**՝ սպառողը, որի էներգամատակարարումն իրականացվում է այլ սպառողի սպառման համակարգից, և որն ունի մատակարարի հետ սահմանված կարգով կնքված՝ էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարման պայմանագիր.

ե) **էլեկտրաէներգետիկական շուկա**՝ սույն օրենքին և շուկայի կանոններին համապատասխան կազմակերպված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի, հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման մեջ ներգրավված էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների փոխհարաբերությունների համակարգ.

զ) **էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներ**՝ սույն օրենքին և շուկայի կանոններին համապատասխան մանրածախ շուկային մասնակցող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, մատակարարման, հաղորդման, բաշխման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձինք, ինչպես նաև սպառողները.

է) **էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ**՝ էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեությունը կանոնակարգելուն և դրա թափանցիկությունն ապահովելուն ուղղված կենտրոնացված ծառայությունները.

ը) **էլեկտրաէներգիայի գնման երաշխիք**՝ սույն օրենքով, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերություն գործարքներով սահմանված ժամկետներում և ծավալով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը) գնելու պարտավորություն, որին համապատասխանող իրավունքները պաշտպանվում են սույն օրենքով, շուկայի կանոններով և պայմանագրերով: Սույն սահմանման իմաստով լիցենզիա ունեցող անձի արտադրած էլեկտրական էներգիայի (հզորության) քանակություն է համարվում այն քանակությունը, որը վերջինիս կողմից փաստացի արտադրվել և առաքվել է, ինչպես նաև, որը վերջինս պատրաստ էր արտադրել և առաքել, սակայն չի կարողացել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կարգավարման արդյունքում կամ հաղորդման ցանցում կամ բաշխման ցանցում այն ընդունելուն պատրաստ չլինելու պատճառով, և այդ դեպքերը որպես բացառություն սահմանված չեն շուկայի կանոններում.

թ) **էլեկտրաէներգիայի մատակարարում**՝ սույն օրենքով նախատեսված կարգավորվող պայմաններով սպառողներին էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարում.

ժ) **ինքնավար էներգաարտադրող**՝ սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում

Էլեկտրական էներգիայի իր սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատտը.

ժա) **լիցենզիա**՝ Հանձնաժողովի որոշմամբ տրամադրված պաշտոնական փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սույն օրենքով նախատեսված գործունեություն իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու անձի իրավունքը, իսկ սույն օրենքով և լիցենզիայով նախատեսված դեպքերում՝ նաև պարտականությունը.

ժբ) **լիցենզավորված անձ**՝ սույն օրենքի համաձայն լիցենզիա ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

ժգ) **խոցելի սպառող**՝ բնակիչ բաժանորդ, որը Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ստացել է խոցելի սպառողի կարգավիճակ հաշվի առնելով վերջինիս սոցիալապես անապահով լինելու կամ հատուկ կարգավիճակ ունենալու հանգամանքը.

ժդ) **կարգավարում**՝ Էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որոնք կապահովեն սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ.

ժե) **հաղորդման (փոխադրման) ցանց**՝ էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի հաղորդման (փոխադրման) գծերի (ենթակայանների, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների) միասնական համակարգը, որի միջոցով էլեկտրական, ջերմային էներգիան կամ բնական գազը հաղորդվում (փոխադրվում) է բաշխման ցանց, սպառողին, արտահանվում (ներկրվում) և (կամ) տարանցվում է երրորդ երկիր.

ժզ) **համակարգային ծառայություններ**՝ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և անվտանգ աշխատանքի համար շուկայի կանոններով սահմանված կարգավորվող գներով ձեռքբերվող ծառայություններ.

ժլ) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

ժը) **մատակարարման և օգտագործման կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգավորման փաստաթղթերը, որոնցով սահմանվում են մատակարարների կողմից սպառողներին ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարման ու վերջիններիս կողմից դրանց օգտագործման կանոնները և պայմանները.

ժթ) **միացում**՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված էներգետիկայի բնագավառի նորմատիվ իրավական ակտերի և Հանձնաժողովի կողմից սահմանված միացման կանոնների համաձայն նոր կամ վերակառուցվող սպառման համակարգի կամ կայանի միացում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցին.

ի) **շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնները, որոնցով

կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները, ինչպես նաև հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման պլանավորման, կառավարման, կարգավարման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները.

իա) **սակագին՝** էլեկտրական էներգիայի (հզորության), ջերմային էներգիայի, բնական գազի միավորի վաճառքի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար Հանձնաժողովի կողմից սույն օրենքին համապատասխան սահմանված առավելագույն գին կամ վճար.

իբ) **սպառող (բաժանորդ)**՝ էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի և (կամ) ջերմային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող անձը, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել մատակարարման լիցենզիա ունեցող անձի հետ կամ գտնվում է այդ գործընթացում.

իգ) **վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ**՝ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած իրավիճակ, երբ պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականացնել տնտեսական կարգավարում.

իդ) **տարանցում**՝ Արցախի Հանրապետության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրում՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետում՝

1) «ե» ենթակետի «այլընտրանքային» բառը փոխարինել «վերականգնվող» բառով.

2) «ժգ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժգ) խոցելի սպառողների շահերի պաշտպանությունը.».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժդ» ենթակետ.

«ժդ) հաղորդման և բաշխման ցանցերին ոչ խտրական մուտքի և միացման երաշխավորումը:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով.

«Հոդված 5.1. էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը

1. էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը իր իրավասության շրջանակներում անմիջականորեն իրագործում է էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականությունը, ինչպես նաև օժանդակում էներգետիկայի բնագավառի պետական կարգավորմանը:

2. Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը էներգետիկայի բնագավառում՝

ա) մշակում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

բ) մշակում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում իր իրավասությունների շրջանակից բխող՝ էներգետիկայի բնագավառի նորմատիվ իրավական ակտերը.

գ) համագործակցում է Հանձնաժողովի հետ՝ էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման, էներգետիկայի բնագավառում միջպետական համագործակցության ընդլայնման ուղղությամբ.

դ) առաջարկություններ է ներկայացնում մինչև 30 մեգավատտ դրվածքային հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ Հանձնաժողովի կողմից տրամադրվող լիցենզիաների շրջանակներում տարեկան գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

ե) համաձայնություն է տալիս Հանձնաժողովի կողմից 30 մեգավատտ և ավելի դրվածքային հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրմանը՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

զ) համաձայնություն է տալիս Հանձնաժողովի ներկայացրած շուկայի կանոններին.

է) համաձայնություն է տալիս Հանձնաժողովի ներկայացրած էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերին.

ը) համաձայնություն է տալիս Հանձնաժողովի ներկայացրած էլեկտրա-էներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշներին.

թ) նախապատրաստում և Արցախի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում էներգետիկայի բնագավառում պետություն-մասնավոր գործընկերության գործարքների վերաբերյալ առաջարկություններ, մասնակցում դրանց իրականացմանը»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Կարգավորումը

Էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է Հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և լիցենզիա ունեցող անձանց շահերը, լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը՝ երաշխավորելով սպառողների իրավունքները»:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածում՝

- 1) «բ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.
- 2) «գ» ենթակետից հանել «կարգավորվող» բառը.
- 3) «դ» և «ը» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էլեկտրական էներգիայի (հզորության), ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը»:

«ը) համաձայնության տրամադրումը լիցենզավորված անձանց կողմից ներկայացված ներդրումային ծրագրերին՝ ապագա սակագներում դրանց ամբողջովին կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ» ենթակետ.

«թ) լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի (մշտադիտարկման) իրականացումը»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 12. Հանձնաժողովի իրավասությունները

Հանձնաժողովն իրավասու է՝

ա) սահմանել էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման և շուկայի կանոններով սահմանված համակարգային ծառայությունների սակագները.

բ) սահմանել սպառողներին վաճառվող բնական գազի, ջերմային էներգիայի վաճառքի սակագները, ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից սպառողներին ծառայությունների մատուցման սակագները.

գ) իր կողմից սահմանված կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնել լիցենզավորում՝ տրամադրել լիցենզիաներ, երկարաձգել դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպել, կասեցնել և դադարեցնել դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանել լիցենզիաների պայմանները, վերահսկել դրանց կատարումը և կիրառել սույն օրենքով սահմանված տուժանքներ.

դ) հաստատել լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ՝ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը.

ե) սահմանել ջերմային էներգիայի, ինչպես նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները.

զ) հաստատել շուկայի կանոնները՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի համաձայնությամբ.

է) սահմանել լիցենզավորված անձանց միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը, իր կողմից սահմանված կարգով գրանցել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև ներկրման և արտահանման պայմանագրերը՝ սույն օրենքի 12.1-ին հոդվածի համաձայն.

ը) սահմանել լիցենզավորված անձանց և սպառողների միջև կնքվող էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը և ապահովել դրանց ներդրումը.

թ) կազմակերպել քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման հետ կապված, քննարկումների արդյունքով կայացնել որոշումներ և (կամ) տալ պարզաբանումներ.

ժ) սույն օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի, լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման, Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների ու տեղեկությունների հավաստիության ուսումնասիրության նպատակով իր կողմից սահմանված կարգով իրականացնել լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում).

ժա) լիցենզավորված և լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող անձանցից պահանջել բոլոր այն տեղեկություններն ու տվյալները, որոնք անհրաժեշտ են լիցենզիաների տրամադրման, դրանց պայմանների վերահսկման, սակագների սահմանման, տարաձայնությունների և այլ հարցերի քննարկման համար.

ժբ) սահմանել լիցենզավորված անձանց կողմից սպառողների սպասարկման որակի նվազագույն պահանջները.

ժգ) սահմանել Արցախի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ՝ կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման համար.

ժդ) համաձայնություն տալ լիցենզավորված անձանց կողմից ներկայացված ներդրումային ծրագրերին՝ ապագա սակագներում դրանց ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով.

ժե) ապահովել իր կողմից ընդունված որոշումների կիրարկումը և մեկնաբանումը.

ժզ) համագործակցել էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ՝ էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման, էներգետիկայի բնագավառում միջպետական համագործակցության ընդլայնման ուղղությամբ.

ժէ) հաստատել լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերը՝ էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի համաձայնությամբ.

ժը) հաստատել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի մշակված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները, էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշները՝ էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի համաձայնությամբ.

ժթ) սահմանել լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառման վարման լրացուցիչ պահանջներ:»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով.

«Հոդված 12.1. Պայմանագրերը և դրանց գրանցումը (հաշվառումը)

1. Գազամատակարարման համակարգում լիցենզավորված անձանց միջև կնքված և արտահանման ու ներկրման պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից: Պայմանագրերի գրանցման կամ մերժման ժամկետը չի կարող գերազանցել տասն աշխատանքային օրը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված անձանց միջև կնքված և արտահանման ու ներկրման պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից՝ շուկայի կանոններով նախատեսված դեպքերում: Պայմանագրերի գրանցման կամ մերժման ժամկետը չի կարող գերազանցել տասն աշխատանքային օրը»:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով.

«4. Լիցենզավորված անձը պարտավոր է իր սպառողների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների, ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվությունը համարել և պահել գաղտնի:

5. Լիցենզավորված անձինք իրավասու են բացահայտել սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունները

ա) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հանցագործության բացահայտման, քրեական հետապնդման առնչությամբ կամ ազգային անվտանգության դեմ սպառնալիքի դեպքում.

բ) Հանձնաժողովի պահանջով՝ վերջինիս վերապահված իրավասությունների իրականացման շրջանակում.

գ) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն լիցենզավորված անձի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ լիցենզավորված անձի): Սպառողը կարող է պահանջել, որպեսզի բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով:

6. Լիցենզավորված անձը պատասխանատվություն չի կրում սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի համար»:

Հոդված 11. Օրենքի 4-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«ՄԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ»:**

Հոդված 12. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) վերնագրի «Կարգավորվող սակագների» բառերը փոխարինել «Սակագների» բառով.

2) 1-ին պարբերությունում «Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի կարգավորվող սակագների և այդ ոլորտներում ծառայությունների

մատուցման դիմաց վճարումների» բառերը փոխարինել «Սակագների» բառով.

3) «դ» ենթակետում «տեսակներով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև խոցելի սպառողներ լինելու հանգամանքով» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» և «ժա» ենթակետեր.

«ժ) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով լիցենզավորված անձի կրած հիմնավորված լրացուցիչ ծախսերի կամ ստացած լրացուցիչ օգուտների ներառումը սակագնում.

ժա) լիցենզավորված գործունեության համար սահմանվող սակագներում տնտեսական այլ գործունեության ծախսերի չներառելը:»:

Հոդված 13. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Կարգավորվող սակագների» բառերը փոխարինել «Սակագների» բառով.

2) 2-րդ կետում «երեսուն օր հետո» բառերից հետո լրացնել «, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով» բառերը.

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հանձնաժողովը կարող է սահմանել լիցենզավորված անձի գործունեության երկարաժամկետ սակագին: Էներգետիկայի բնագավառում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքի համաձայն՝ Հանձնաժողովը տրամադրվող գործունեության լիցենզիայով կարող է սահմանել սակագնային երկարաժամկետ համաձայնագիր:»:

4) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Լիցենզավորված անձը կարող է կիրառել Հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր սակագին, պայմանով, որ չի վտանգում կամ չի վտանգի լիցենզավորված գործունեությունը: Սակագների նման իջեցման դեպքում նոր սակագներ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի չի առնում սակագների իջեցման հետևանքով լիցենզավորված անձի հնարավոր վնասները:»:

Հոդված 14. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն են՝

ա) էլեկտրական էներգիայի (հզորություն) արտադրությունը, ջերմային էներգիայի արտադրությունը կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը.

բ) էլեկտրական էներգիայի հաղորդումը, ջերմային էներգիայի հաղորդումը, փոխանցումը կամ բնական գազի փոխադրումը.

գ) էլեկտրական էներգիայի բաշխումը, ջերմային էներգիայի բաշխումը կամ բնական գազի բաշխումը.

դ) էլեկտրական էներգիայի մատակարարումը (ներկրումը), արտահանումը.

ե) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կամ գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունը.

զ) բնական գազի ներկրումը կամ բնական գազի արտահանումը.

է) էներգետիկական շուկային ծառայություններ մատուցելը:

Էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի առուվաճառք իրականացնել (վաճառքի նպատակով գնել) կարող են միայն սույն օրենքին համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձինք, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ.

«1.1 Էլեկտրական էներգիայի ներկրումը և (կամ) արտահանումը կարող են իրականացվել միայն Հանձնաժողովի կողմից տրված գործունեության այն տեսակի լիցենզիայի շրջանակում, որը սույն օրենքի համաձայն ներառում է էլեկտրական էներգիայի ներկրում և (կամ) արտահանում իրականացնելու իրավունքը՝ սույն օրենքին և շուկայի կանոններին համապատասխան:».

3) 2-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կարգավորման ենթակա չեն՝

ա) բացառապես սեփական կարիքների համար ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված և էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում, ինչպես նաև ջերմային էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման և արտադրության ժամանակահատվածում.

բ) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 մեգավատտը.

գ) անօրգանական և օրգանական վառելիք օգտագործող մինչև մեկ մեգավատտ դրվածքային հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում.

դ) մինչև 150 կիլովատտ դրվածքային հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում, բացառությամբ հիդրոէլեկտրակայանների և սույն կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքերի.

ե) վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման (բացառությամբ փոքր հիդրոէլեկտրակայանների) և արտադրության ժամանակահատվածում:»:

Հոդված 15. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 20. Լիցենզավորված գործունեության իրականացման համար ներկայացվող երաշխիքները

1. Կառուցման ժամանակահատվածը ներառող էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիա ստանալու, արտադրության լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու, նշված ժամանակահատվածները երկարաձգելու նպատակով անձինք

Հանձնաժողով են ներկայացնում Արցախի Հանրապետության օրենսդրությանը չհակասող երաշխիքներ՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

2. Էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում կայանը չվերակառուցելու, լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու, ինչպես նաև արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքերում երաշխիքային գումարը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և չափով ենթակա է փոխանցման Արցախի Հանրապետության պետական բյուջե:»:

Հոդված 17. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 21. Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը

1. Լիցենզիա ունեցող անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև լիցենզիա ունեցող անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքերում լիցենզիա ունեցող անձը պարտավոր է նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

2. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար լիցենզավորված անձը պարտավոր է նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե այն խախտում կամ կարող է խախտել էներգետիկ համակարգի հուսալիությունը կամ անվտանգությունը կամ ներքին շուկայի սպառողների շահերը, կամ ձեռքբերողը չունի անհրաժեշտ փորձ, ինչպես նաև համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկատվությունը չեն համապատասխանում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի պահանջներին, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության գնահատմամբ վնասում կամ կարող է վնասել ազգային անվտանգությանը կամ պետական շահերին:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն տարածվում մինչև 30 մեգավատտ հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 30 մեգավատտ գումարային հզորությամբ մեկից ավելի կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ ունեցող անձանց վրա, եթե վերջիններս չունեն այլ լիցենզիաներ, որոնց դեպքում

պահանջվում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված համաձայնեցում:»:

Հոդված 18. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի «բ», «գ», «դ» և «զ» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 1-ին կետի «ը» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը) սահմանված կարգով Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ներդրումային ծրագրերը՝ ապագա սակագներում ներդրումների ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով.»

3) 2-րդ կետում «գործունեությունը» բառից հետո լրացնել «պետք է վարվի լիցենզավորված գործունեությունից առանձին՝ առանձնացված հաշվառմամբ, և» բառերը:

Հոդված 19. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության յուրաքանչյուր տեսակի համար պարտավոր է վարել առանձնացված հաշվառում՝ Արցախի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:»:

Հոդված 20. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետում «օրենքների» բառից հետո լրացնել «և նորմատիվ իրավական ակտերի» բառերը.

2) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին հոդվածով.

«Հոդված 24.1. Գործունեության լիցենզիայի կասեցումը և դադարեցումը

1. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է կասեցվել «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա կասեցվելու դեպքում:

2. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով, ինչպես նաև հետևյալ դեպքերում՝

ա) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի

վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

բ) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցումը.

դ) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ուժը կորցրած ճանաչվելու կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:»:

Հոդված 22. Օրենքի 25-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 26. Բնական գազի արտահանման և ներկրման լիցենզիաները

1. Բնական գազի արտահանման լիցենզիա ունեցող անձն ունի բնական գազի ներկրման, փոխադրման կամ բաշխման լիցենզիա ունեցող անձից բնական գազ գնելու և արտահանելու իրավունք՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի:

2. Բնական գազի ներկրման լիցենզիա ունեցող անձն ունի բնական գազ ներկրելու և փոխադրման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) անմիջապես սպառողին դա վաճառելու իրավունք՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի:»:

Հոդված 24. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էլեկտրական էներգիա արտադրող կայան (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակ-

ցված արտադրության կայան) կառուցելու (վերակառուցելու), էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոնների համաձայն դա վաճառելու կամ արտահանելու իրավունք, ինչպես նաև այն դեպքերում, երբ արտադրողը սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ.

«1.1. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք Հանձնաժողովի սահմանած սակագներով պարտավոր են էլեկտրական էներգիան վաճառել՝ շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով: Մնացած դեպքերում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք էլեկտրական էներգիան կարող են վաճառել շուկայի մասնակիցներին կամ արտահանել՝ չկարգավորվող գներով»:

3) 2-րդ կետից հանել «, ընդլայնելու» բառը.

4) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

5) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածով սահմանված լիցենզիաները տրվում են հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը, ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանությունը՝

ա) մինչև 30 մեգավատտ դրվածքային հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ նաև հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի՝ Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող առաջարկությունները՝ տվյալ կայանների տարեկան գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ.

բ) 30 մեգավատտ և ավելի դրվածքային հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ նաև ստանալով էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի համաձայնությունը»:

Հոդված 25. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետից հանել «, ընդլայնելու» և «և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ էլեկտրական էներգիա (հզորություն) տարանցելու» բառերը:

Հոդված 26. Օրենքի 31-րդ հոդվածում՝

1) 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ բացառիկ գործառույթներով.

ա) էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.

բ) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.

գ) էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.

դ) տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Արցախի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգա-

հեռ աշխատանքի ապահովում, ինչպես նաև լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ ոչ բացառիկ գործառնությունների իրականացման իրավունքներ:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը, համագործակցելով գործունեության լիցենզիա ունեցող անձանց հետ, մշակում է էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները, համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշները և ներկայացնում Հանձնաժողովի հաստատմանը:

3. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց կարգավարելիս՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք կհանգեցնեն սպառողների համար էլեկտրական էներգիայի (հզորության) նվազագույն ծախսումներով արտադրությանը և հաղորդմանը՝ հաշվի առնելով արտադրողներին տրված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքները:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել այլ լիցենզավորվող գործունեությամբ էներգետիկայի բնագավառում, բացառությամբ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»:

Հոդված 27. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1) 1-ին կետում «էներգիա (հզորություն) բաշխելու» բառերը փոխարինել «էներգիայի (հզորության) բաշխման և բաշխման ցանցի կարգավարման» բառերով, հանել «, ընդլայնելու» և «, շուկայի կանոններին և լիցենզիայի պայմաններին համապատասխան՝ էլեկտրական էներգիա (հզորություն) գնելու և վաճառելու» բառերը.

2) 1-ին կետի 2-րդ նախադասությունը հանել.

3) 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությամբ:»:

4) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը, համագործակցելով լիցենզիա ունեցող անձանց հետ, մշակում է էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններն ու դրանք ներկայացնում Հանձնաժողովի հաստատմանը:»:

Հոդված 28. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32.1-ին հոդվածով.

«Հոդված 32.1. Մատակարարման լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձն ունի շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիա (հզորություն) ինքնավար էներգաարտադրողից գնելու և (կամ) ներկրելու իրավունք և պարտավոր է լիցենզիայի պայմաններին ու կնքված

պայմանագրերին համապատասխան դա վաճառել իր հետ մատակարարման պայմանագիր կնքած սպառողներին:

2. Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձը պարտավոր է երաշխավորել գնված էլեկտրական էներգիայի (հզորության) դիմաց վաճառողների օգտին վճարումները Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 29. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 5.1

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ

Հոդված 33.1. Ընդհանուր սկզբունքները

1. Էլեկտրաէներգիայի (հզորության) առևտուրն իրականացվում է էլեկտրաէներգետիկական շուկայում՝ կնքված պայմանագրերի հիման վրա:

2. Էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրի մասնակիցներին ծառայություններ են մատուցում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը:

3. Էլեկտրաէներգետիկական շուկայում չեն կարգավորվում՝

ա) մատակարարի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) գները.

բ) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից՝ ներքին շուկայի պահանջարկը բավարարվելուց հետո վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) գները:

4. Էլեկտրաէներգետիկական շուկայի չկարգավորվող հատվածում երաշխավորվում է տնտեսական մրցակցության համար համապատասխան պայմանների ապահովումը:

Հոդված 33.2. Էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրի մասնակիցները

1. Էլեկտրաէներգետիկական շուկային մասնակցում են՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, մատակարարման լիցենզիա ունեցող անձինք, ինքնավար էներգաարտադրողները և սպառողները:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, ինչպես նաև էլեկտրական էներգիայի հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձանց և շուկայի առևտրի մասնակիցների փոխհարաբերությունները սահմանվում են շուկայի կանոններով:

Հոդված 33.3. Շուկայի առևտրային և ցանցային կանոնները

1. Էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային կանոններով սահմանվում են.

ա) էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքը.

բ) էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության սկզբունքները.

գ) էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների գրանցման կարգը.

դ) էլեկտրաէներգետիկական շուկայում առևտրի իրականացման կանոնները.

ե) էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման կանոնները.

զ) էլեկտրաէներգետիկական շուկայում հայտերի և առաջարկների ներկայացման կանոնները.

է) էլեկտրաէներգիայի (հզորության) համակարգային ծառայությունների հաշվառման ու վճարման կարգը.

ը) էլեկտրաէներգետիկական շուկայում տվյալների պահպանմանը և թափանցիկությանը ներկայացվող պահանջները.

թ) էլեկտրաէներգետիկական շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը.

ժ) էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին ներկայացվող պահանջները.

ժա) սպառողների կողմից մատակարարներին փոփոխելու կարգը.

ժբ) սպառած էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ու վճարման կարգը.

ժգ) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման ու անճշտության հայտնաբերման դեպքում մատակարարի ու սպառողի փոխհարաբերությունները:

2. Էլեկտրաէներգետիկական շուկայի ցանցային կանոնները բաղկացած են հաղորդման ցանցային կանոններից և բաշխման ցանցային կանոններից:

3. Էլեկտրաէներգետիկական հաղորդման ցանցային կանոններով սահմանվում են.

ա) էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորումը.

բ) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարումը.

գ) էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումը և կարգավարումը.

դ) էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին նոր հզորությունների միացումը.

ե) էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները.

զ) էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը:

4. Էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով սահմանվում են.

ա) բաշխման ցանցի զարգացման պլանավորումը.

բ) բաշխման ցանցի օպերատիվ կառավարումը.

գ) էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումը և կարգավարումը.

դ) բաշխման ցանցին նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերի, ինչպես նաև նոր հզորությունների միացումը.

ե) բաշխման ցանցում էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները.

զ) բաշխման ցանցի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը:»:

Հոդված 30. Օրենքի 6-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 34. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի կազմակերպումը

1. Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը և Հանձնաժողովը Էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով մշտապես կատարելագործում են Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքն ու կանոնները և համագործակցում այլ երկրների հետ:

2. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրը և տարանցումը պետք է իրականացվեն Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման պայմանով՝ նպատակ ունենալով բարձրացնել Էլեկտրաէներգետիկական շուկայի արդյունավետությունը:

3. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրն իրականացվում է սույն օրենքի համաձայն Էլեկտրաէներգիայի ներկրման և (կամ) արտահանման իրավունք ունեցող անձանց կողմից: Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը սույն օրենքով և շուկայի կանոններով սահմանված կարգով համակարգում է Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրը, ինչպես նաև տարանցումը:

4. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրը կարող է իրականացվել ինչպես օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ Էլեկտրական էներգիայի առքուվաճառքի ուղիղ պայմանագրերի կնքման, այնպես էլ Արցախի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական շուկան այլ երկրների Էլեկտրաէներգետիկական շուկաների հետ զուգակցելու միջոցով: Արցախի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական շուկան այլ երկրների հետ զուգակցելու պայմանները և առքուվաճառքի կանոնները որոշվում են համապատասխան պայմանագրերով:

5. Օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք Արցախի Հանրապետության տարածքով Էլեկտրական էներգիա տարանցելու իրավունք ունեն՝ շուկայի կանոններով սահմանված կարգով Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, հաղորդման, ինչպես նաև բաշխման (եթե տարանցվող Էլեկտրական էներգիան անցնում է նաև բաշխման ցանցով) լիցենզիա ունեցող անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա:»:

Հոդված 31. Ուժը կորցրած ճանաչել 35-րդ հոդվածը:

Հոդված 32. Օրենքի 36-րդ, 38-րդ, 39-րդ և 42-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 36. Տուժանքները

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալ խախտումները վերացնելու

վերաբերյալ հանձնարարականներ և կիրառել սույն հոդվածով նախատեսված տուժանքները:

2. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է նախազգուշացում:

3. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիզենզիայի պայմանների կոպիտ խախտման, կամ Էներգետիկայի բնագավառում այլ լիզենզավորված անձի օրինական շահերի խախտման, կամ լիզենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիզենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն ՀՀ դրամից քառասուն միլիոն ՀՀ դրամի չափով, կամ լիզենզիայի գործողության կասեցում կամ լիզենզիայի գործողության դադարեցում:

4. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից Հանձնաժողովի Էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունած իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ կետերով վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում:

5. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիզենզիայի գործողության կասեցում կամ լիզենզիայի գործողության դադարեցում:

6. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիզենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ Էներգետիկայի բնագավառում այլ լիզենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիզենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիզենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ խոչընդոտել է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառնությունների պատշաճ իրականացմանը՝ առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն ՀՀ դրամից քսան միլիոն ՀՀ դրամի

չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

7. Կայանի կառուցման ժամանակահատվածում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի, գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային էներգիայի հաղորդման կամ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձի, մինչև 30 մեգավատտ դրվածքային հզորություն ունեցող կայաններում էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձի կողմից սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն ՀՀ դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված անձանց կողմից սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն ՀՀ դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

9. Սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված անձանց կողմից սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ խոչընդոտել է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառնությունների պատշաճ իրականացմանը՝ առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն ՀՀ դրամից մեկուկես միլիոն ՀՀ դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:»:

«Հոդված 38. Սպառողների էներգամատակարարումը

1. Սպառողին էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարումը կատարվում է մատակարարման պայմանագրի համա-

ձայն, որով մատակարարը պարտավորվում է մատակարարել էլեկտրական կամ ջերմային էներգիա կամ բնական գազ, իսկ սպառողը՝ ընդունել դա և վճարել դրա համար՝ այդ պայմանագրով, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հասցված վնասը փոխհատուցվում է խախտողի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Պայմանագրերի կատարման հսկողությունն իրականացնում են միայն պայմանագրային կողմերը:

3. Բաշխման լիցենզիա ունեցող անձը պարտավոր է էլեկտրական կամ ջերմային էներգիա կամ բնական գազ բաշխել իր սպասարկման տարածքում գտնվող յուրաքանչյուր սպառողի, որը բավարարում է շուկայի կանոնների կամ մատակարարման և օգտագործման կանոնների պահանջները:

4. Եթե էլեկտրական կամ ջերմային էներգիան կամ բնական գազն սպառվում է առանց մատակարարման պայմանագրի (ապօրինի սպառում), ապա բաշխման լիցենզիա ունեցող անձը անմիջապես դադարեցնում է էներգիայի (բնական գազի) ապօրինի սպառումը և պահանջում վնասի փոխհատուցում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Մատակարարված էներգիան և բնական գազը խոցելի սպառողներն իրավունք ունեն օգտագործել բացառապես կենցաղային կարիքների բավարարման նպատակով:

6. Մոնիթինգային աջակցության բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում Հանձնաժողովին՝ խոցելի սպառողների համար էներգիայի և բնական գազի մատակարարման հատուկ սակագներ և պայմաններ սահմանելու նպատակով, ինչպես նաև խոցելի սպառողներին էներգիա և բնական գազ մատակարարող լիցենզավորված անձանց՝ վերջիններիս հաշվառելու նպատակով:

Հոդված 39. Սպառողի կողմից էլեկտրական էներգիայի փոխանցումը

1. Սպառողը պարտավոր է իր էներգատեղակայանքներով փոխանցել էլեկտրական էներգիան կամ բնական գազը, որը նախատեսված է ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

2. Սպառողն իրավունք ունի իր էլեկտրական էներգիան և բնական գազը փոխանցել այլ անձի, եթե նման փոխանցումը սպառողի կողմից չի իրականացվում իբրև ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակ և այդ փոխանցումը բխում է սպառողի գործունեության էությունից (առևտրային, արտադրական կամ բնակելի տարածքների օգտագործման տրամադրում):»:

«Հոդված 42. Էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման ցանցեր ոչ խտրական մուտքի իրավունքը

1. Ցանկացած անձ իրավունք ունի իր նոր կամ վերակառուցված սպառման համակարգը կամ կայանը ոչ խտրական պայմաններով միացնել էլեկտրական

կամ բնական գազի հաղորդման կամ բաշխման ցանցերին՝ համաձայն Արցախի Հանրապետությունում ընդունված տեխնիկական կանոնակարգերի և Հանձնաժողովի կողմից սահմանված միացման կանոնների:

2. Անձն իր սպառման համակարգը կամ կայանը էլեկտրական, ջերմային կամ բնական գազի հաղորդման կամ բաշխման ցանցերին միացման համար Հանձնաժողովի սահմանած դեպքերում և կարգով վճարում է միացման վճար: Միացման վճարը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձև կամ որոշվել անհատական կարգով՝ յուրաքանչյուր նոր միացվող սպառման համակարգի կամ կայանի համար:

3. Այն դեպքերում, երբ անձի սպառման համակարգի կամ կայանի միացումը էլեկտրական կամ բնական գազի հաղորդման կամ բաշխման ցանցերին կարող է ազդել նշված համակարգի հուսալիության և անվտանգության վրա, ապա այդպիսի միացումներն իրականացվում են էլեկտրաէներգետիկական կամ գազամատակարարման համակարգի օպերատորի համաձայնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

4. Այն դեպքերում, երբ անձի սպառման համակարգը կառուցվել է գործող էներգակայանքների անվտանգության գոտիներում, ապա այդ էներգակայանքների տեղափոխման ծախսերը կրում է տվյալ տարածքի սեփականատերը:

5. Էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) կամ բաշխման լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են շուկայի կանոնների և պայմանագրերի հիման վրա ապահովել համապատասխանաբար իրենց հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերին ցանկացած անձի ոչ խտրական մուտքի իրավունքը, ինչպես նաև իրենց ցանցերով հաղորդել (փոխադրել) կամ բաշխել սպառողի կամ այլ անձանց էլեկտրական էներգիան կամ բնական գազը՝ Հանձնաժողովի սահմանած սակագնով:»:

Հոդված 33. Օրենքի 44-րդ և 45-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 34. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի «գ» ենթակետում «20 տարվա ընթացքում» բառերից հետո լրացնել «տրվում է» բառերը, «էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով» բառերը փոխարինել «էլեկտրաէներգիայի գնման երաշխիք» բառերով, իսկ վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պարագայում տվյալ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության նոր լիցենզիա տրամադրվելու դեպքում սույն ենթակետով նախատեսված ժամկետը հաշվարկվում է տվյալ կայանի համար սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:»:

2) 2-րդ կետի «ա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետ.

«6.1. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել էլեկտրական էներգիայի իրենց

սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կիլովատտ, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման կառուցման և արտադրության ժամանակահատվածներում:»:

Հոդված 35. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածով լրացվող Օրենքի 12.1-ին հոդվածի 2-րդ կետը գործում է մինչև սույն օրենքով լրացվող Օրենքի 33.3-րդ հոդվածում նշված էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային կանոնների ուժի մեջ մտնելը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից 6 ամսվա ընթացքում Հանձնաժողովը պարտավոր է սահմանված կարգով լրացումներ և փոփոխություններ կատարել նախկինում տրված լիցենզիաներում:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից 18 ամսվա ընթացքում Հանձնաժողովը պարտավոր է իր կողմից ընդունված որոշումները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին և ընդունել սույն օրենքի կիրարկման համար անհրաժեշտ նոր իրավական ակտեր:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՀՕ-71-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
նոյեմբերի 29-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի 18-րդ հոդվածի աղյուսակի «7. **Էներգետիկայի բնագավառ**» բաժնի «ե» կետի «ե.7)» ենթակետի «ներկրման» բառը փոխարինել «մատակարարման (ներկրման)» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՀՕ-72-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
նոյեմբերի 29-ին

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի մարտի 28-ի ՀՕ-202 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «8. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնի 2-րդ կետի առաջին սյունակի «ներկրում» բառը փոխարինել «մատակարարում (ներկրում)» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՀՕ-73-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
դեկտեմբերի 13-ին

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-4 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ և 6-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Կարգավորման հիմնական սկզբունքները

Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից՝ օրենքներով լիազորված իրավասությունների շրջանակում.

բ) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը և անկախությունը.

գ) կարգավորման թափանցիկության ապահովումը հանրության համար.

դ) սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը.

ե) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցում երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով, միաժամանակ ապահովելով ներդրողներին՝ ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորություն.

զ) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց կարգավորման շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում ոչ մրցակցային շուկաների առաջացման դեպքում՝ կարգավորման ներդրումը.

է) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ մուտքի խոչընդոտների կրճատումը և կարգավորվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) հասանելիության կանոնների պահպանման ապահովումը.

ը) հասցեական կարգավորումը.

թ) հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին:

Հողված 6. Կարգավորող մարմինը

1. Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումն իրականացնում է Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով), որը գործում է սույն օրենքով, ճյուղային օրենքներով և այլ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների հիման վրա և ինքնուրույն է իր իրավասությունների շրջանակում:

2. Հանձնաժողովի գտնվելու վայրը Արցախի Հանրապետության Մտեփանակերտ քաղաքն է: Հանձնաժողովն ունի Արցախի Հանրապետության զինանշանով և «Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով» բառերով կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

3. Հանձնաժողովն իր իրավասության սահմաններում կարող է Արցախի Հանրապետության անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կարող է կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, ինչպես նաև իր գործունեության նպատակներին և ամրացված գույքի նշանակությանը համապատասխան՝ տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ գույքը:»

Հողված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հանձնաժողովի նախագահին նշանակում է Արցախի Հանրապետության նախագահը, իսկ մյուս անդամներին Արցախի Հանրապետության նախագահը՝ Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ առաջին կազմի և սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքերի:».

2) 4-րդ կետում՝

ա. «ա» ենթակետի «դատավճռով» բառը փոխարինել «վճռով» բառով,

բ. «գ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետ.

«դ) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկով նախատեսված դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն ունեցող անձինք:».

3) 5-րդ կետի «ե» ենթակետում «հինգ» բառը փոխարինել «երկու» բառով.

4) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ,» բառերը փոխարինել «սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով» բառերով.

5) 7-րդ կետից հանել «և տեղյակ պահելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետին» բառերը:

Հողված 3. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8. Հանձնաժողովի աշխատակազմը

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների ծառայողական պարտականությունների շրջանակը հաստատում է Հանձնաժողովը:

Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թիվը հաստատում է Հանձնաժողովը՝ համաձայնեցնելով պետական ֆինանսների կառավարման բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի հետ:

2. Հանձնաժողովի աշխատակազմը գործում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, սույն օրենքին, իր կանոնադրությանը, Հանձնաժողովի որոշումներին և Հանձնաժողովի նախագահի հրամաններին համապատասխան և ապահովում է Հանձնաժողովի լիազորությունների իրականացումը:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավասությունները, բացառությամբ հայցվոր և պատասխանող հանդես գալու իրավունքից, Հանձնաժողովի կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պատվիրակվել աշխատակազմին:

4. Աշխատակազմի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թիվը և աշխատակազմի գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցեր կարգավորվում են Հանձնաժողովի որոշումներով:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել ներկայացուցչական որևէ մարմնի անդամ, զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից՝ պայմանով, որ այդ աշխատանքները չեն ֆինանսավորվում կարգավորվող անձանց կողմից:

Հանձնաժողովի անդամն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝

1) «ա» ենթակետում «գործունեությունը» բառից հետո լրացնել «, աշխատանքը» բառը.

2) «գ» և «դ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ» իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրամաններ, ներառյալ՝ ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) կամ դիտանցում իրականացնելու վերաբերյալ, Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր, վերահսկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը.

դ) իր իրավասությունների շրջանակում ներկայացնում է Հանձնաժողովը Արցախի Հանրապետությունում, այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում, առանց լիազորագրի հանդես է գալիս Հանձնաժողովի անունից».

3) «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) իր իրավասությունների սահմաններում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներին, ընդունում է հրամաններ նրանց խրախուսման կամ կարգապահական տույժի ենթարկելու մասին»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգումը

1. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ, որոնք իրենց բնույթով կարող են լինել նորմատիվ, անհատական կամ ներքին (լուկալ) իրավական ակտեր:

2. Հանձնաժողովն իր որոշումներն ընդունում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը դոմբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ Հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր, ինչպես նաև, երբ դա կարող է վնաս հասցնել շահագրգիռ անձանց շահերին:

Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված առանձին հարցեր կարող են նշվել որպես քննարկման ոչ ենթակա հարցեր, եթե դրանք ունեն տեխնիկական կամ ներքին կանոնակարգային բնույթ: Եթե քննարկման ոչ ենթակա հարցի մասին հայտարարելուց հետո այդ հարցի վերաբերյալ ներկայացվում է առարկություն կամ առաջարկություն, ապա այն պետք է քննարկվի և ընդունվի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Հանձնաժողովի նիստերը գումարվում են Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

Հանձնաժողովի արտահերթ նիստերը հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն երեք անդամի պահանջով:

4. Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է նիստերի անցկացման տեղը և ժամանակը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով:

5. Եթե Հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սահմանվող սակագները, սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր, ապա Հանձնաժողովն այդ մասին ողջամիտ ժամկետներում իրազեկում է Արցախի Հանրապետության կառավարությանը և սպառողների շահերը պաշտպանող

կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, հանդես գալ ելույթներով և առաջարկություններով:

Նիստում պատասխանատվության միջոցների կիրառման հարցի քննարկման դեպքում Հանձնաժողովը նիստից առնվազն հինգ օր առաջ ծանուցում է շահագրգիռ անձանց քննարկման վայրի, օրվա և ժամի մասին՝ նշելով քննարկման ենթակա հարցի բնույթը:

Ծանուցված շահագրգիռ անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը և որոշումների ընդունմանը:

Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնել ապացույցներ, տալ բացատրություններ և բերել փաստարկներ, առարկել նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառման դեմ, ինչպես նաև ներկայացնել այլ միջնորդություններ:

Որոշման ընդունումից հետո՝ հինգ օրվա ընթացքում, դրա պատճենը տրամադրվում է այն անձին, որի վերաբերյալ դա կայացվել է, կամ ուղարկվում է նրան պատվիրված նամակով:

Հանձնաժողովն իր որոշման չկատարման դեպքում իրավասու է հայցով դիմել դատարան:

Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

6. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի առնվազն երեք անդամ, ներառյալ՝ նախագահը կամ նախագահի տեղակալը կամ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահի պաշտոնեական պարտականությունները կատարող Հանձնաժողովի անդամը:

Հանձնաժողովի որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, բացի օրենքով նախատեսված դեպքերից, եթե դրան կողմ է քվեարկել Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Քվեարկությունից ձեռնպահ մնալը կամ ձայնի փոխանցումը մեկ այլ անդամի չի թույլատրվում:

Հանձնաժողովի որոշման վերաբերյալ Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը կցվում է նիստի արձանագրությանը:

Հանձնաժողովի նիստում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն ունեցող Հանձնաժողովի անդամը պարտավոր է քննարկումից առաջ տեղեկացնել մյուս անդամներին իր շահագրգռվածության փաստի և բնույթի մասին, ինչը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ: Այդ տեղեկացումից հետո նշված անդամը՝

ա) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ նիստին մասնակցելուց.

բ) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավագործության ապահովման նպատակով:

Անձը, որի հարցը քննվում է, կարող է բացարկ հայտնել Հանձնաժողովի անդամին, եթե վերջինս քննարկվող հարցի վերաբերյալ ունի անձնական շահագրգռվածություն:

Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստերն արձանագրում է Հանձնաժողովի աշխատակազմի քարտուղարը: Արձանագրությունն ստորագրում են նիստը նախագահողն ու քարտուղարը:

7. Հանձնաժողովը վարում է իր իրավական ակտերի գրանցամատյանը: Հանձնաժողովի նորմատիվ բնույթի ակտերը հրապարակվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:

8. Հանձնաժողովը պարտավոր է ապահովել իր իրավական ակտերի մատչելիությունը:

9. Հանձնաժողովը հաստատում է Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի, Հանձնաժողովի անդամների, աշխատակազմի և կարգավորվող անձանց, ինչպես նաև աշխատակազմի և սպառողների միջև վարվեցողության կանոնները:

10. Հանձնաժողովի ներկայացուցիչները, Հանձնաժողովի իրավասություններով և պարտականություններով պայմանավորված, ունեն ազատ մուտքի իրավունք կարգավորվող անձանց գործունեության տարածք:

11. Հանձնաժողովն իր աշխատանքներում իրավասու է հասարակական կամ վճարովի հիմունքներով ներգրավել մասնագետներ կամ անկախ փորձագետներ:

Փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

12. Հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ միջոցներով:

13. Սույն օրենքի պահանջները խախտելու համար Հանձնաժողովի պատժատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

14. Հանձնաժողովն իրավասու է կիրառել օրենքներով նախատեսված պատասխանատվության միջոցներ, նշանակել օրենքներով նախատեսված չափով տուգանք:

15. Իր վերահսկողական գործառնություններն իրականացնելու նպատակով Հանձնաժողովն ուսումնասիրություններ և ստուգումներ է իրականացնում «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Հանձնաժողովի գործունեության տարեկան ծրագիրը և նախորդ տարվա գործունեության հաշվետվությունը հաստատվում են Հանձնաժողովի որոշմամբ:»:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Հանձնաժողովի ֆինանսավորումը

1. Հանձնաժողովն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Հանձնաժողովի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի օրենսդրությամբ սահմանված կարգով և «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողովի և աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ներկայացնում է Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին: Այն ընդգրկվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի նախագծում և առանձին տողով ամփոփ ներկայացվում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը:

2. Արցախի Հանրապետության պետական բյուջեից Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է սույն օրենքի 19.1-ին հոդվածի համաձայն ձևավորված՝ Հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.35 գործակցով: Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծության և սույն օրենքի 19.1-ին հոդվածի համաձայն ձևավորված՝ Հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է Հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, Հանձնաժողովի անդամների և աշխատողների սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին, որոնց չափերը (մեծությունը) սահմանում է Հանձնաժողովը: Ընդ որում, նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարզևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել սույլ մարմնի աշխատավարձի ֆոնդի 30 տոկոսը: Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների նյութական խրախուսման և զարգացման, Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների սոցիալական ծրագրերի իրականացման և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված՝ Հանձնաժողովի այլ ֆոնդերի ծախսման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հաշվարկված Հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարը, որը ներառվում է Հանձնաժողովի պահպանման ծախսերում, ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով: Յուրաքանչյուր տարի հաշվարկված գումարը հասարակական կազմակերպություններին տրամադրվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պետական լիազոր մարմնի կողմից: Սույն մասում նշված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

5. Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 20
Ստեփանակերտ
ՀՕ-74Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
դեկտեմբերի 13-ին

**«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ոստիկանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-175 օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, բացառությամբ 20-րդ հոդվածի 5-րդ կետի, 22-րդ հոդվածի 2-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

- 1) 3-րդ մասում «կառուցվածքը» բառից առաջ լրացնել «կանոնադրու-թյունը,» բառը.
- 2) 4-րդ մասի «ընդհանուր» բառը փոխարինել «անմիջական» բառով:

Հոդված 3. Օրենքի 42-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Արցախի Հանրապետության նախագահը:».
- 2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 20
Ստեփանակերտ
ՀՕ-75-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
դեկտեմբերի 13-ին

**«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-77 օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, բացառությամբ 2-րդ հոդվածի 3-րդ մասի ««Ոստիկանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով» բառերի, 21-րդ հոդվածի 2-րդ մասի, 22-րդ հոդվածի, 41-րդ հոդվածի 5-րդ մասի, 48-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 2-րդ մասի, 61-րդ հոդվածի 2-րդ մասի, 62-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 1-ին մասի:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ և 3-րդ մասերից հանել « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առաջարկությամբ» բառերը.
- 2) 3-րդ մասում «փրկարարական ծառայության» բառերը փոխարինել «արտակարգ իրավիճակների պետական ծառայության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հանել « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ» բառերը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությունից հանել « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի» բառերը:

Հոդված 5. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «փրկարար ծառայության» բառերը փոխարինել «արտակարգ իրավիճակների պետական ծառայության» բառերով.
- 2) «կառավարությանն առընթեր» բառերը հանել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 20
Ստեփանակերտ
ՀՕ-76-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
դեկտեմբերի 13-ին

**«ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-41 օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, բացառությամբ 20-րդ հոդվածի 11-րդ մասի և 26-րդ հոդվածի 6-րդ մասի:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «բ» կետն ուժը կորցրած ճանաչել.
- 2) «դ» կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր» բառերը.
- 3) «ե» կետից հանել «կառավարությանն առնթեր» բառերը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում «պետական վարչության» բառերը փոխարինել «ծառայության» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 20
Ստեփանակերտ
ՀՕ-77-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
դեկտեմբերի 13-ին

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, բացառությամբ 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 1-ին մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքին» բառերի:

Հոդված 2. Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը,» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 20
Ստեփանակերտ
ՀՕ-78-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2018թ.

N 983-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 79-Ա
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ր ք շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Արցախի Հանրապետության կրթության, զիտության և սպորտի նախարարության 2018 թվականի կենտրոնացված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 79-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) «Օգնություն մարզֆեդերացիաներին» 8-րդ բաժնի աղյուսակի 6-րդ տողի «6600,0» թիվը փոխարինել «7291,0» թվով, «Ընդամենը» տողի «48000,0» թիվը փոխարինել «48691,0» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՌԱՎԱՐՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում	-	-	-	-
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	691,0
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	691,0
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	691,0
		04	Օգնություն մարզֆեդերացիաներին	-	-	-	691,0
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	691,0
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-691,0
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(39381,0)
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(39381,0)
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	-	(39381,0)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	-	(39381,0)
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	38690,0
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	38690,0
		01	Պետական աջակցություն արտասահմանյան բուհերում ԱՀ-ից նպատակային ուսումնառություն ստացող ուսանողներին	-	-	-	38690,0
			ԱՀ կառավարություն	-	-	-	38690,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 դեկտեմբերի 2018թ.

N 1000-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 135-Ն որոշման հավելվածի 114-րդ և 118-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 դեկտեմբերի 2018թ.

N 1004-Ն

ք.Ստեփանակերտ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1993 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի Հ. 344 ՈՐՈՇՈՒՄՆ ՌԻՃԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածներին, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշման հավելվածի 36-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների հաշվառման և նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրման կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների դիմումների գրանցման, քաղաքացիներին հաշվառման վերցնելու, հաշվառումից հանելու, քաղաքացիների դիմումները մերժելու մասին որոշումների, քաղաքացիներին ուղարկված ծանուցումների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացուն հաշվառման վերցնելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացու դիմումը մերժելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացուն հաշվառումից հանելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովի գործունեության կարգի օրինակելի ձևը:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված

հանձնաժողովի գործունեության կարգի օրինակելի ձևը հաստատվելու պահից տասնօրյա ժամկետում հաստատել շրջանի վարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովի գործունեության կարգը:

4. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների հետ իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ 2019 թվականի հունվարի 1-ից հերթացուցակները ձևավորելու համար:

Ստեփանակերտի քաղաքապետին՝ սույն որոշմամբ սահմանված կարգով ձևավորվող՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողների ընտանիքների և Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամների հերթացուցակներում ներառել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգի մասին» կանոնադրության հաստատման և կիրարկման մասին» հ. 344 որոշմամբ հաստատված կանոնադրությամբ նախատեսված կարգով հաշվառված քաղաքացիներին՝ պահպանելով հաշվառման հաջորդականությունը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգի մասին» կանոնադրության հաստատման և կիրարկման մասին» հ. 344 որոշմամբ հաստատված կանոնադրությամբ նախատեսված կարգին համապատասխան հաշվառված, սակայն սույն որոշմամբ սահմանված առանձին սոցիալական խմբերում չընդգրկված քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ հարաբերությունների ծագման պահին գործող իրավական ակտերով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգի մասին» կանոնադրության հաստատման և կիրարկման մասին» հ. 344 որոշումը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՍԲԵՐՈՒՄ ԸՆԴՊՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ
ՆՐԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ**

I. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգի նպատակը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիներին հաշվառելն է, նրանց բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելը կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելն է:

2. Սույն կարգը կարգավորում է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիներին հաշվառելու, հաշվառումից հանելու, բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելու իրավական հիմքերի, մեխանիզմների և վերահսկողության հետ կապված հարաբերությունները:

3. Սույն կարգով բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրվում կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգվում են՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողների ընտանիքներին:

2) Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին:

4. Հինգ և ավելի անչափահաս երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների հաշվառումն ու նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 16-ի «Հինգ և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի համար բնակարան կամ բնակելի տուն գնելու կամ բնակելի տուն կառուցելու կարգը հաստատելու մասին» N 194-Ն, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումն ու նրանց բնակարանների տրամադրումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 274 որոշումներով հաստատված կարգերով:

5. Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամները, Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակները, փախստականները, սույն կարգի իմաստով բազմազավակ, միաձնող ընտանիքների անդամները բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով պետական ֆինանսական աջակցություն ստանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամներին, Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակներին, Արցախի Հանրապետության զինված ուժերի սպայական կազմի զինծառայողներին, Արցախի Հանրապետության զինված ուժերի պայմանագրային զինծառայողներին, փախստականներին և

բազմազավակ, միաձնող ընտանիքներին հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 889-Ն որոշմամբ հաստատված կարգով:

II. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Մույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձ, որի՝

ա. բնակելի մակերեսով ապահովվածությունը ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով յոթ քառակուսի մետրից պակաս է,

բ. ընտանիքում ինը տարեկանից բարձր տարբեր սեռի անձինք, բացի ամուսիններից, բնակվում են մեկ սենյակում,

գ. ընտանիքի անդամները տառապում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված հիվանդություններով, որոնց դեպքում հիվանդին առանձին կամ լրացուցիչ բնակելի մակերես է պահանջվում և որի տրամադրման դեպքում ընտանիքի մյուս անդամներից յուրաքանչյուրին կմնա յոթ քառակուսի մետրից պակաս բնակելի մակերես.

2) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիներ՝ Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի, միաձնող, բազմազավակ ընտանիքների անդամներ, Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող հաշմանդամներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, փախստականներ.

ա. Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի ընտանիք 18 տարին չլրացած երեխան, 18 տարին չլրացած եղբայրը, քույրը և թոռը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում, 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նրա հաշմանդամության պատճառը մանկուց հիվանդությունն է, նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում, զինծառայողի մահվան օրվա դրությամբ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) զինծառայողի 14 տարին չլրացած կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով, նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում), ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամ՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) զինծառայողի 14 տարին չլրացած կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող՝ երկու ծնողին կամ միակ ծնողին կորցրած երեխայի խնամքով, նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում),

բ. միաձնող ընտանիք՝ ամուսիններից մեկը մահացած կամ ամուսնալուծված կամ երեխա որդեգրած միայնակ անձ, կամ ամուսնության մեջ չգտնվող, երեխայի ծննդյան վկայականում հոր մասին տեղեկությունների բացակայության կամ երեխայի հոր մասին գրանցումը սահմանված կարգով մոր ցուցումով կատարված լինելու դեպքում առանց հոր մեծացնող մայր կամ ամուսնության մեջ չգտնվող առանց մոր երեխա մեծացնող հայր,

գ. բազմազավակ ընտանիք՝ Արցախի Հանրապետությունում բնակվող ընտանիք, որտեղ ծնվել և (կամ) որդեգրվել և խնամվում են չորս և ավելի անչափահաս երեխաներ,

դ. Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող հաշմանդամ՝ առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն ունեցող անձ,

ե. առանց ծնողական խնամքի մնացած երեխայի թվին պատկանող անձ՝ 18-23 տարեկան անձ, ում ծնողները կամ միակ ծնողը մինչև նրա 18 տարին լրանալը մահացել են (է), զրկվել են (է) ծնողական իրավունքներից, ճանաչվել են (է) անգործունակ, խուսափել են (է) երեխայի դաստիարակությունից կամ նրա իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են (է) մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են,

զ. փախստական՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ և քաղաքացիություն ստացած անձ՝ այդ թվում, վերջինիս փախստականի վկայականում նշված ընտանիքի անդամ.

3) ընտանիք՝ միննույն բնակության վայրում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացիների սոցիալական խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե.

4) ընտանիքի ժամանակավորապես բացակա անդամ՝ Արցախի Հանրապետության զինված ուժեր գորակոչված և պարտադիր զինվորական ծառայություն անցնող, իրենց հաշվառման վայրից դուրս ուսումնական հաստատություններում սովորող, գործուղման մեկնած, բուժում ստացող անձինք, ժամկետային ընտրովի կամ նշանակովի պաշտոններ զբաղեցնող անձինք.

5) բնակարան՝ բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք.

6) բնակելի տուն՝ բնակվելու համար նախատեսված, բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի և օժանդակ մասերից բաղկացած, կոմունալ հարմարություններով օժտված և կից տնտեսական և օժանդակ բակային կառույցներով կառույց.

7) բնակելի սենյակ՝ բնակարանի կամ կառույցի մեջ ամեն մի առանձին բաժանմունք, մյուսներից անջատված խուլ պատերով կամ միջնորումներով, դռնով և պատուհանով ու նախատեսված աշխատելու, բնակվելու, ճաշելու, քնելու, հանգստի համար.

8) բնակարանի օժանդակ մակերես՝ օժանդակ տարածքների (նախասենյակ, միջանցք, խոհանոց, լոդյարան, զուգարան, բաց պատշգամբ և այլ տարածքներ) մակերեսների գումարը.

9) բնակարանի ընդհանուր մակերես՝ բնակելի և օժանդակ մակերեսների գումարը.

10) վերանորոգում՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի, կոնստրուկտիվ տարրերի, ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների աշխատունակության և շահագործողական ցուցանիշների վերականգնմանը՝ չկապված վերակառուցման հետ.

11) կառուցում՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված բնակելի տան շինարարությանը.

12) բնակարանային պայմանների վատթարացում՝ քաղաքացուն հաշվառման վերցնելու օրվա դրությամբ նրա կողմից վերջին տասը տարիների ընթացքում նրան սեփականության իրավունքով պատկանող բնակարանի կամ բնակելի տան օտարում.

13) հերթացուցակ՝ հաշվառման վերցված քաղաքացու և նրա ընտանիքի վերաբերյալ տվյալներ պարունակող փաստաթուղթ.

14) լիազոր մարմին՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն.

15) իրավասու մարմին՝ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմեր, Ստեփանակերտի քաղաքապետարան:

III. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՍ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՍ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՍ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի ընտանիքի և Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամի (այսուհետ՝ քաղաքացիներ) հաշվառումը և նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրումը կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգումն իրականացվում է հասարակական վերահսկողության ներքո՝ հրապարակայնության ապահովմամբ:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված պահանջի կատարումն ապահովելու նպատակով Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերում, Ստեփանակերտի քաղաքապետարանում ստեղծվում են բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են ներկայացուցիչներ՝ չորս անդամ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերից, Ստեփանակերտի քաղաքապետարանից, մեկ անդամ լիազոր մարմնից, մեկ անդամ արհեստակցական միություններից, մեկ անդամ առողջապահական, մեկ անդամ հասարակական կազմակերպություններից (համաձայնությամբ): Բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովների անհատական կազմերը հաստատում են Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը, Ստեփանակերտի քաղաքապետարանը:

9. Բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովների առաջարկությունները հիմք են հանդիսանում քաղաքացիներին հաշվառելու և բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելու դեպքում:

10. Քաղաքացին, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, հաշվառվում է, եթե համապատասխան բնակավայրում ունի տասը տարվա անընդմեջ հաշվառում, բացառությամբ սույն կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Գյուղական բնակավայրերում քաղաքացու համար սահմանվում է հինգ տարվա անընդմեջ հաշվառման ժամկետ: Արցախի Հանրապետության շրջանի մեկ գյուղական բնակավայրում հաշվառումից դուրս գալու և նույն շրջանի այլ գյուղական բնակավայրում հաշվառվելու դեպքում պահպանվում է սույն պարբերությունում նշված հաշվառման անընդմեջությունը:

Արցախի Հանրապետության Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում հաշվառումից դուրս գալու և այլ բնակավայրում հաշվառվելու դեպքում հաշվառման ժամկետ չի սահմանվում:

11. Քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրելիս բնակելի մակերեսը որոշվում է՝ ելնելով հետևյալ պահանջների բավարարումից.

1) ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով առնվազն ինը քառակուսի մետր.

2) ընտանիքում 20 շաբաթական հղիություն ունեցող անձի դեպքում, որը հաստատվում է բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքով, լրացուցիչ մեկ անդամի հաշվով առնվազն ինը քառակուսի մետր.

3) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված հիվանդություններով տառապող անձինք, որոնք իրավունք ունեն ստանալու առանձին սենյակ կամ լրացուցիչ բնակելի մակերես:

12. Քաղաքացուն տրամադրվող բնակարանի կամ բնակելի տան բնակելի մակերեսի չափը կարող է վերանայվել՝ քաղաքացուն իրավասու մարմնում հաշվառելու պահից մինչև նրան բնակարան կամ բնակելի տուն տրամադրելն ընկած ժամանակաշրջանում ընտանիքի կազմի փոփոխման դեպքում:

13. Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի ծնողը, ամուսինը, երեխան համատեղ բնակվելու դեպքում բնակարանը կամ բնակելի տունը տրամադրվում է նրանց միասին, իսկ այն դեպքում, երբ զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի ծնողը բնակվում է զոհված զինծառայողի ամուսնուց և երեխաներից առանձին՝ բնակարանը կամ բնակելի տունը տրամադրվում է ամուսնուն և երեխաներին:

14. Սեփականության իրավունքով բնակարան կամ բնակելի տուն ունեցող, սակայն սույն կարգով նախատեսված ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը չբավարարող և իրավասու մարմնում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրվում է՝ նրան սեփականության իրավունքով պատկանող բնակարանը կամ բնակելի տունը նվիրատվության կարգով Արցախի Հանրապետությանը հանձնելու դեպքում:

Համատեղ սեփականության իրավունքով բնակարան կամ բնակելի տուն ունեցող, սակայն սույն կարգով նախատեսված ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը չբավարարող և իրավասու մարմնում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրելու պայմանները որոշում է սույն կարգի 8-րդ կետում նշված բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովը:

Բնակարանի կամ բնակելի տան նկատմամբ բաժնային սեփականության իրավունք ունենալու դեպքում սույն կարգով նախատեսված բնակելի մակերեսը հաշվարկվում է բնակարանի կամ բնակելի տան բնակելի մակերեսը ընտանիքի անդամների թվի վրա բաժանելու միջոցով: Որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրվում է, եթե ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը չի բավարարում սույն կարգով նախատեսված չափը:

15. Հաշվառման մեջ գտնվելու իրավունքը պահպանվում է՝

1) այն քաղաքացիների համար, ովքեր սույն կարգի 6-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հանդիսանում են ընտանիքի ժամանակավորապես բացակա անդամ:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

16. Քաղաքացու մահվան դեպքում նրա ընտանիքի համար պահպանվում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, եթե ընտանիքը շարունակում է համարվել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող:

17. Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողի ընտանիքը բնակարանի կամ բնակելի տան վերանորոգման նպատակով իրավասու մարմնում հաշվառվում է, եթե ընտանիքում՝

1) զոհվել (մահացել) է ամուսինը.

2) զոհվել (մահացել) է միակ աշխատող զավակը.

3) անհայտ կորել է ամուսինը կամ միակ աշխատող զավակը:

18. Պետական աջակցությամբ բնակարան կամ բնակելի տուն ստացած քաղաքացիները բնակարան կամ բնակելի տուն վերանորոգելու իրավունքից չեն օգտվում:

Բնակարան կամ բնակելի տուն ունեցող քաղաքացիներն օգտվում են բնակարան կամ բնակելի տուն վերանորոգելու իրավունքից, բացառությամբ սույն կետի 1-ին պարբերությամբ նախատեսված դեպքի:

19. Նախքան քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրելն իրավասու մարմինը նորից ստուգում է քաղաքացու կողմից սույն կարգին համապատասխան ներկայացված տեղեկությունները:

20. Քաղաքացիներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրվում են համամասնորեն՝ ելնելով ազատ բնակարանային ֆոնդում առկա բնակարանների և բնակելի տների քանակից:

21. Քաղաքացին սույն կարգով նախատեսված բնակարան կամ բնակելի տուն ստանալու իրավունքից կարող է օգտվել մեկ անգամ:

Սույն կարգի 18-րդ կետի 2-րդ պարբերությունում նշված քաղաքացիները բնակարան կամ բնակելի տուն վերանորոգելու իրավունքից բացի կարող են, ընտանիքի կազմի ավելացման դեպքում, օգտվել նաև բնակարան կամ բնակելի տուն ստանալու իրավունքից՝ ապահովելով սույն կարգի 14-րդ կետի պահանջները, բացառությամբ այն դեպքի, երբ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը բավարարող համապատասխան բնակարան կամ բնակելի տուն ազատ բնակարանային ֆոնդում առկա չէ: Այս դեպքում ընտանիքին տրամադրվում է լրացուցիչ բնակարան կամ բնակելի տուն:

IV. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառվելու համար քաղաքացին, իսկ սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված ընտանիքի դեպքում ընտանիքի չափահաս անդամներից մեկը իր հաշվառման վայրի իրավասու մարմին է ներկայացնում՝

1) դիմումը.

2) իր և իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի կազմի մասին տեղեկանքը.

4) զինծառայողի զոհվելու մասին տեղեկանքը.

5) հաշմանդամությունը հաստատող փաստաթղթի պատճենը.

6) իր և իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի անշարժ գույքի վերաբերյալ տվյալների մասին տեղեկանքը.

7) անհրաժեշտության դեպքում սույն կարգով նախատեսված դրույթներին համապատասխան այլ փաստաթղթեր:

23. Իրավասու մարմինը սույն կարգի 22-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո լիազոր մարմնի միջոցով բնակչության պետական ռեգիստրից ստանում է քաղաքացու բնակչության վայրի հասցեի վերաբերյալ տեղեկությունները և կցում նրա անձնական գործին:

24. Սույն կարգի 22-րդ կետին համապատասխան ներկայացված փաստաթղթերի հավաստիության համար պատասխանատվությունը կրում է քաղաքացին:

25. Քաղաքացու կողմից ներկայացված դիմումը համարվում է ընդունված միայն այն դեպքում, երբ սույն կարգի 22-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացված են ամբողջությամբ և ստուգված է դրանցում ներկայացված տեղեկությունների հավաստիությունը: Իրավասու մարմինը քաղաքացու դիմումին կից ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով կարող է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կառույցներից ու կազմակերպություններից ստանալ օրենքով չարգելված տեղեկություններ:

26. Իրավասու մարմին դիմած յուրաքանչյուր քաղաքացու համար կազմվում է անձնական գործ, որտեղ պահվում են սույն կարգով պահանջվող փաստաթղթերը: Քաղաքացու անձնական գործի համարը պետք է համընկնի հատուկ հաշվառման մատյանում (այսուհետ՝ մատյան) նրա ազգանվան դիմաց նշված համարին:

27. Մատյանը վարում է իրավասու մարմինը, որում գրանցվում են քաղաքացիների դիմումների ստացման, դրանց քննարկման արդյունքների հիման վրա ընդունված որոշումների, քաղաքացիներին ուղարկված ծանուցումների մասին բոլոր տվյալները: Մատյանը պետք է համարակալված, ժապավենավորված և ստորագրված լինի իրավասու մարմնի ղեկավարի կողմից: Իրավասու մարմնի կնիքով կնքված մատյանը

պահվում է որպես խիստ հաշվառման փաստաթուղթ և չի թույլատրվում դրանում կատարել ուղղումներ:

28. Քաղաքացիների դիմումները քննարկվում են ըստ մատյանում գրանցված համարների հերթականության՝ մեկամյա ժամկետում: Իրավասու մարմինը դիմումի քննարկման արդյունքների մասին քաղաքացուն գրավոր ծանուցում է ոչ ուշ, քան քաղաքացուն հաշվառման վերցնելու կամ նրա դիմումը մերժելու մասին որոշում կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում:

29. Քաղաքացին հաշվառումից հանվում է՝

- 1) դիմումի համաձայն.
- 2) բնակարանով կամ բնակելի տնով ապահովվելու դեպքում.
- 3) Արցախի Հանրապետությունում հաշվառումից դուրս գալու դեպքում.
- 4) Արցախի Հանրապետությունում նույն շրջանի հաշվառումից դուրս գալու

դեպքում.

5) մահանալու դեպքում.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

30. Հաշվառումից հանված քաղաքացու փոխարեն նույն համարի տակ նոր հաշվառում չի իրականացվում, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի:

31. Նոր հաշվառման վերցված քաղաքացին հերթացուցակում ընդգրկվում է հերթական համարով:

32. Քաղաքացին հաշվառումից հանվում է իրավասու մարմնի որոշմամբ: Իրավասու մարմինը եռօրյա ժամկետում ընդունած որոշման մասին գրավոր ծանուցում է քաղաքացուն, բացառությամբ սույն կարգի 29-րդ կետի 5-րդ ենթակետի:

V. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

33. Քաղաքացիների հաշվառումն իրականացվում է՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողների ընտանիքներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու հերթացուցակով.

2) Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողների ընտանիքների բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման հերթացուցակով.

3) Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու հերթացուցակով.

4) Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամների բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման հերթացուցակով:

34. Սույն կարգի 33-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված հերթացուցակներից առանձնացվում են առաջնահերթ և արտահերթ բնակարաններ կամ բնակելի տներ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակները:

Բնակարանները կամ բնակելի տներն առաջնահերթ տրամադրվում են այն քաղաքացիներին, որոնց ընտանիքներում առկա են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված հիվանդություններով տառապող անձինք:

Բնակարանները կամ բնակելի տներն արտահերթ տրամադրվում են այն քաղաքացիներին, որոնց բնակարանը կամ բնակելի տունը տարերային աղետի, հրետակոծության կամ ուրբակոծության հետևանքով դարձել է բնակության համար ոչ պիտանի:

35. Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու հերթացուցակում հաշվառված Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամի՝ ռազմաճակատում գտնվելու կամ զինվորական ծառայության ժամանակ տարած հիվանդության պատճառով մահանալու դեպքում, եթե նրա ընտանիքը շարունակում է համարվել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, նրա հերթը տեղափոխվում է Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած, անհայտ կորած) զինծառայողների ընտանիքներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու հերթացուցակ, եթե նոր հերթացուցակում նրա հերթն ավելի առաջ է՝ ընտանիքի համար պահպանելով Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու հերթացուցակում հաշվառման տարեթիվը:

36. Իրավասու մարմինը պարտավոր է սույն կարգի 37-րդ կետում նշված հերթացուցակներում կատարվող ընթացիկ փոփոխությունների մասին տեղեկությունները մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին:

37. Իրավասու մարմինը հերթացուցակները, սույն կարգին համապատասխան ձևավորելուց հետո, եռօրյա ժամկետում ներկայացնում է լիազոր մարմնին՝ պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով:

38. Բնակարանները կամ բնակելի տները քաղաքացիներին տրամադրում են Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը, Ստեփանակերտի քաղաքապետարանը՝ իրավասու մարմնում առկա հերթացուցակներին համապատասխան:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձեփ

Մ Ա Տ Յ Ա Ն

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Հ/Հ	Քաղաքացու դիմումի գրանցման օրը, ամիսը, տարին	Անձնական գործի համարը	Քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը	Հաշվառման հասցեն	Քաղաքացուն հաշվառման վերցնելու մասին որոշման օրը, ամիսը, տարին	Քաղաքացու դիմումը մերժելու մասին որոշման օրը, ամիսը, տարին	Քաղաքացուն հաշվառումից հանելու մասին որոշման օրը, ամիսը, տարին	Քաղաքացուն հաշվառման վերցնելու կամ հաշվառումից հանելու կամ քաղաքացու դիմումը մերժելու մասին ծանուցման օրը, ամիսը, տարին	Իրավասու մարմնի աշխատողի գրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՁեՎ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ
ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի _____
(անունը՝ հայրանունը՝ ազգանունը)

Մույնով տեղեկացնում եմք, որ Դուք, որպես բնակարանային պայմանների
բարելավման կարիք ունեցող, հաշվառվել եք Արցախի Հանրապետության _____
շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի

_____ (նշել ստորաբաժանման անվանումը)

_____ հերթացուցակում _____ համարի տակ:

Արցախի Հանրապետության _____ շրջանի վարչակազմի ղեկավար

(Ստեփանակերտի քաղաքապետ) _____
(անունը՝ ազգանունը) (ստորագրությունը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձեռք

ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՔԱՎԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ
ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ
ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Սույնով տեղեկացնում ենք, որ Ձեր դիմումը, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառվելու մասին, մերժվել է՝ հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի _____ -ի N _____ Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի _____ :
(նշել կետը, ենթակետը, պարբերությունը)

Արցախի Հանրապետության _____ շրջանի վարչակազմի ղեկավար

(Ստեփանակերտի քաղաքապետ) _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՁեՎ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ
ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ
ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Մույնով տեղեկացնում եմք, որ Դուք, համաձայն Արցախի Հանրապետության
կառավարության 2018 թվականի _____-ի N _____Ն որոշման N 1 հավելվածով
հաստատված կարգի 29-րդ կետի _____ ենթակետի, հանվել եք հաշվառումից:

Արցախի Հանրապետության _____ շրջանի վարչակազմի ղեկավար
(Ստեփանակերտի քաղաքապետ) _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թ.

N 1018-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն
ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	(25 000,0)
	6		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(25 000,0)
		1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(25 000,0)
		02	Ընտրություններ	-	-	-	(25 000,0)
			ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	-	-	-	(25 000,0)
03			ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Հասարակական կարգ և անվտանգություն	-	-	-	-
		1	Ոստիկանություն	-	-	-	-
		01	Հասարակական կարգի պահպանության ապահովում	-	-	-	(9 000,0)
			ԱՀ ոստիկանություն	-	-	-	(9 000,0)
		02	Պետավտոտնամարանիշերի ձեռքբերում	-	-	-	9 000,0
			ԱՀ ոստիկանություն	-	-	-	9 000,0
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲՄԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	-	25 000,0
	2		Այլ ծախսեր	-	-	-	25 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	-	25 000,0
		06	Գույքի գնման ծախսեր	-	-	-	25 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	-	25 000,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 դեկտեմբերի 2018թ.

N 1031-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 2,62091 հեկտար անտառը՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 դեկտեմբերի 2018թ.

N 1042-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 620 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ յ մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 16-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվող բնակարանների կահավորման մասին» N 620 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի «պետական» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությունը» բառերը՝ «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

2) որոշման 2-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը, իսկ «2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)» բառերը փոխարինել «3 000 000 (երեք միլիոն)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2018թ.

N 1046-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 264-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 3-ի թիվ 17 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության ենթակայության՝ մանկապատանեկան մարզադպրոցներ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տիպային (օրինակելի) կանոնադրությունը, գործունեությունը կարգավորող չափորոշիչները, դասակարգումը և ուսումնամարզչական գործընթացի կազմակերպումը հաստատելու մասին» N264-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, 2-րդ կետի 1-ին ենթակետում, 3-րդ կետի 1-ին ենթակետում, որոշմամբ հաստատված N3 հավելվածի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի» բառերով.

2) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ենթակայության՝ «Մանկապատանեկան մարզադպրոցներ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ «Մանկապատանեկան մարզադպրոցներ») ցանկը՝ համաձայն N 1.1-ին հավելվածի.».

3) 3-րդ կետի 1-ին ենթակետում «նախարարությունը» բառից հետո լրացնել «և համապատասխանաբար Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմը» բառերը.

4) որոշումը լրացնել N 1.1-ին հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Որոշմամբ հաստատված N1 հավելվածի ցանկի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ տողերը հանել:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով հաստատել Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ենթակայության հանձնված «Մանկապատանեկան մարզադպրոցներ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը, ինչպես նաև ապահովել «Մանկապատանեկան մարզադպրոցներ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրության փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 1046-Ն որոշման

«Հավելված N 1.1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի ապրիլի 25-ի N 264-Ն որոշման

Ց Ա Ն Կ
«ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
1	Ասկերանի մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմ
2	Մարտակերտի մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմ
3	Մարտունու մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմ
4	Հադրութի մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմ
5	Շուշիի մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Շուշիի շրջանի վարչակազմ
6	Շահումյանի «Խաչեն» մանկապատանեկան մարզադպրոց	ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմ

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2018թ.

N 1047-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՏՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 28-Ի N 575 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 71-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության 2018-2019 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի «Քնարավանի Ք. Հարությունյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Քնարավանի Ք. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

3. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Սարուշենի Գր.Այվազյանցի անվան միջնակարգ դպրոց» և Սարտակերտի շրջանի «Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում բացել մեկական նախադպրոցական խումբ՝ շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:

4. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել Ասկերանի շրջանի «Սարուշենի Գր.Այվազյանցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը.

2) Ասկերանի շրջանի «Սարուշենի Գր.Այվազյանցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կից նախադպրոցական խմբի գործունեությունն ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախապատրաստական խմբերի օրինակելի հաստիքա-

ցուցակը հաստատելու մասին» N 188/Մ հրամանին համապատասխան և այդ խմբում ընդգրկել կրտսեր, միջին և ավագ տարիքային խմբերի երեխաներին:

5. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել Մարտակերտի շրջանի «Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը.

2) Մարտակերտի շրջանի «Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կից նախադպրոցական խմբի գործունեությունն ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախապատրաստական խմբերի օրինակելի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 188/Մ հրամանին համապատասխան և այդ խմբում ընդգրկել կրտսեր, միջին և ավագ տարիքային խմբերի երեխաներին:

6. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 09 բաժնի 2 խմբի 1 դասի «03 Պետական աջակցություն Արցախի Հանրապետության շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին» ծրագրով նախատեսված գումարից Արցախի Հանրապետության Ասկերանի և Մարտակերտի շրջանների վարչակազմերին հատկացնել համապատասխանաբար 1 935 000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումար՝ Ասկերանի շրջանի «Մարուշենի Գր.Այվազյանցի անվան միջնակարգ դպրոց» և 1 288 000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսունույթ հազար) ՀՀ դրամ գումար՝ Մարտակերտի շրջանի «Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ դպրոցին կից նախադպրոցական խմբերի 2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների պահպանման ծախսերն իրականացնելու համար:

7. Հիմնադրման միջոցով ստեղծել Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի «Հայկավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

8. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի «Հայկավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը հանրակրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

9. Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի «Հայկավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «գ», «դ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի վարչակազմին:

10. Թույլատրել Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի «Հայկավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպու-

թյանն իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
- 2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
- 3) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
- 4) սովորողների սննդի կազմակերպում.
- 5) ուսումնասիրտադրական գործունեության ծավալում և արտադրանքի

իրացում:

11. Հաղորդի շրջանի «Մարիամաձորի Ն. Սայիյանի անվան միջնակարգ դպրոց» և Մարտունու շրջանի «Ճարտարի Հ. Պողոսյանի անվան հ. 5 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում բացել մեկական նախադպրոցական խումբ:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 575 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 134-րդ տողի «Խանձաձորի Հ. Այվազյանի անվան հիմնական դպրոցի Հայկավանի մասնաճյուղ» բառերը հանել.

2) 134-րդ տողից հետո լրացնել նոր 134.1-ին տողով՝ «134.1 Հայկավանի հիմնական դպրոց».

3) 164-րդ տողի «Քնարավանի Ք. Հարությունյանի անվան հիմնական դպրոց» բառերը փոխարինել «Քնարավանի Ք. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:

13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ց Ա Ն Ց

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Շրջանը (Քաղաքը)	Քաղաքային վայրեր					Գյուղական վայրեր				Ընդամենը				
	հիմնական /լինումյա/ միջնակարգ սովորական ընդամենը	միջնակարգ սովորական ընդամենը	սովորական ընդամենը	միջնակարգ սովորական ընդամենը	ընդամենը	հիմնական /լինումյա/ միջնակարգ սովորական ընդամենը	միջնակարգ սովորական ընդամենը	սովորական ընդամենը	ընդամենը	հիմնական /լինումյա/ միջնակարգ սովորական ընդամենը	միջնակարգ սովորական ընդամենը	սովորական ընդամենը	միջնակարգ սովորական ընդամենը	ընդամենը
Ստեփանակերտ	9	1	1	1	12	-	-	-	-	9	1	1	1	12
Ասկերան	-	-	-	1	1	9	23	-	32	9	23	-	1	33
Մարտակերտ	1	-	-	1	2	7	26	-	33	8	26	-	1	35
Մարտունի	4	1	-	2	7	8	21	-	29	12	22	-	2	36
Հաղրութ	-	-	-	1	1	10	15	-	25	10	15	-	1	26
Շուշի	-	-	-	1	1	1	4	-	5	1	4	-	1	6
Շահումյան	-	1	-	-	1	5	10	-	15	4	12	-	-	16
Քաշաթաղ	-	4	-	-	4	11	38	-	49	11	42	-	-	53
ԸՆԴԱՄԵՆԸ	14	7	1	7	29	51	137	-	188	65	144	1	7	217

2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆ - ԼՐԱԿԱԶՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Շրջանը (Քաղաքը)	Քաղաքային վայրեր				Գյուղական վայրեր				Ընդամենը			
	1-4	5-9	10-12	Ընդ.	1-4	5-9	10-12	Ընդ.	1-4	5-9	10-12	Ընդ.
Ստեփանակերտ	134	146	43	323	0	0	0	0	134	146	43	323
Ասկերան	8	7	3	18	90,5	122,5	56	269	98,5	129,5	59	287
Մարտակերտ	16	17	7	40	105	142	67	314	121	159	74	354
Մարտունի	37	44	19	100	89,5	120	55	264,5	126,5	164	74	364,5
Հաղրութ	8	10	8	26	70	95	48	213	78	105	56	239
Շուշի	10	10	3	23	8,5	13	6	27,5	18,5	23	9	50,5
Շահումյան	4	5	3	12	39	48,5	23	110,5	43	53,5	26	122,5
Քաշաթաղ	16	20	12	48	106	130,5	55,5	292	122	150,5	67,5	340
ԸՆԴԱՄԵՆԸ	233	259	98	590	508,5	671,5	310,5	1490,5	741,5	930,5	408,5	2080,5

3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Շրջանը (քաղաքը)/դասարանը	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը
Ստեփանակերտ	902	940	869	992	819	769	648	621	638	297	327	340	8162
Ասկերան	235	252	286	260	205	241	192	189	201	108	139	158	2466
Մարտակերտ	340	306	370	346	323	285	288	257	302	183	181	206	3387
Մարտունի	319	318	354	390	335	327	320	276	320	232	237	249	3677
Հաղրութ	184	199	199	230	174	166	175	184	157	114	150	135	2067
Շուշի	73	72	79	90	74	57	63	73	68	30	26	27	732
Շահումյան	73	68	79	93	69	68	65	60	55	45	38	30	743
Քաշաթաղ	199	211	241	188	186	193	168	182	170	105	122	94	2059
ԸՆԴԱՄԵՆԸ	2325	2366	2477	2589	2185	2106	1919	1842	1911	1114	1220	1239	23293

4. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երջանը (Քաղաքը)	Մանկ. ստեղծ. կենտրոններ			Մարզական դպրոցներ			Շախմատի դպրոց			ԸՆԴԱՄԵՆԸ		
	Հիմնարկ. քանակը	Խմբերի թիվը	Սովորող- ների թիվը	Հիմնարկ. քանակը	Խմբերի թիվը	Սովորող- ների թիվը	Հիմնարկ. քանակը	Խմբերի թիվը	Սովորող- ների թիվը	Հիմնարկ. քանակը	Խմբերի թիվը	Սովորող- ների թիվը
Հանրապետական				1	35	405	1	28	297	2	63	702
Ստեփանակերտ	1	105	1300	1	55	723				2	160	1823
Ասկերան	1	38	360	1	21	237				2	59	597
Մարտակերտ	1	35	420	1	23	280				2	58	700
Մարտունի	1	35	375	1	34	351				2	69	726
Հաղրութ	1	30	366	1	20	241				2	51	607
Շուշի	1	31	316	1	12	135				2	43	451
Շահումյան	1	7	54	1	10	120				2	17	174
Քաշաթաղ				1	14	175				1	14	175
ԿՖՄԸ մարզադպրոց				1	26	240				1	26	240
ԸՆԴԱՄԵՆԸ	7	281	3191	10	250	2907	1	28	297	18	560	6195

5. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐ

Երջանը (Քաղաքը)	Երաժշտական դպրոցներ		Արվեստի դպրոցներ		Երաժշտական վարժարան		ԸՆԴԱՄԵՆԸ	
	քանակը	սաների թիվը	քանակը	սաների թիվը	քանակը	սաների թիվը	քանակը	սաների թիվը
Ստեփանակերտ	1	526	1	520	1	50	3	1096
Ասկերան			2	403			2	403
Մարտակերտ			2	305			2	305
Մարտունի			2	568			2	568
Հաղրութ			2	315			2	315
Շուշի			1	317			1	317
Քաշաթաղ			1	314			1	314
ԸՆԴԱՄԵՆԸ	1	526	11	2742	1	50	13	3318

6. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Շրջանը (քաղաքը)	Հիմնարկների քանակը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը
Ստեփանակերտ	6	30	1110
Ասկերանի շրջան	7	14	338
Մարտակերտի շրջան	7/1*	19/1*	446
Մարտունու շրջան	9	29	680
Հաղրութի շրջան	4	7	176
Շուշիի շրջան	2	6	152
Շահումյանի շրջան	1	2	42
Քաշաթաղի շրջան	3	7	163
ԸՆԴԱՄԵՆԸ	39/1*	114/1*	3107

* Թալիշի մանկապարտեզի գործունեությունը կվերսկսի 2019 թվականի սեպտեմբերի 1-ից

7. ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Շրջանը (քաղաքը)	Նախադպրոցական խմբերի քանակը	
	Խմբերի թիվը	Երեխաների թիվը
Ստեփանակերտ	32	854
Ասկերանի շրջան	6	87
Մարտակերտի շրջան	9	157
Մարտունու շրջան	4	50
Հաղրութի շրջան	8	105
Շուշիի շրջան	1	18
Շահումյանի շրջան	3	69
Քաշաթաղի շրջան	1	10
ԸՆԴԱՄԵՆԸ	64	1351

8.ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	Առկա ուսուցում				
	Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը	Ընդամենը	Որից՝ ավարտողները	
				Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը
Ուսանողների թիվը (բակալավր)	673	781	1454	175	214
Մագիստրանտների թիվը	212	130	342	110	36
Ասպիրանտների թիվը	8		8	3	
ԸՆԴԱՄԵՆԸ	893	911	1804	288	250

9. ՇՈՒՇԻՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	Առկա ուսուցում				
	Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը	Ընդամենը	Որից՝ ավարտողները	
				Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը
Ուսանողների թիվը (բակալավր)	194	148	342	61	29
Մագիստրանտների թիվը	64	35	99	34	9
Ասպիրանտների թիվը	-	-	-		
ԸՆԴԱՄԵՆԸ	258	183	441	95	38

10. ՇՈՒՇԻՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

	Առկա ուսուցում				
	Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը	Ընդամենը	Որից՝ ավարտողները	
				Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը
Ուսանողների թիվը	318	7	325	101	5
ԸՆԴԱՄԵՆԸ	318	7	325	101	5

11. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Առկա ուսուցման սովորողների թիվը				
	Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը	Ընդամենը	Որից՝ ավարտողները	
				Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը
Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջ	118	27	145	19	1
Ստեփանակերտի պարարվեստի քոլեջ	59	-	59	15	-
Ստեփանակերտի բժշկական քոլեջ	109	310	419	30	96
Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջ	103	-	104	17	
ԸՆԴԱՄԵՆԸ	389	337	727	81	97

12. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

		Խմբերի թիվը	Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը	Վճարովի	Ընդամենը
1	Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան	16	258		258
2	Մարտունու արհեստագործական ուսումնարան	12	110		110
3	Շուշիի «Ե.Սոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամ	18	176		176
	ԸՆԴԱՄԵՆԸ	46	544		544

Ծանոթություն՝

ա) Ստեփանակերտ քաղաքում գործում է Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը՝ 12 դասարանով, 309 սովորողների ընդգրկմամբ և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմամարզական վարժարանը՝ 9 դասարանով, 127 սովորողների ընդգրկմամբ:

բ) Շուշի քաղաքում գործում է Դանիել Ղազարյանի անվան հանրակրթական երաժշտական մասնագիտացված ոչ պետական դպրոցը՝ 12 դասարանով, 194 սովորողների և դպրոցին կից նախադպրոցական 1 խմբի՝ 14 երեխայի ընդգրկմամբ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

